

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2017 թվականի N _____-Ն

ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ N 99 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 9-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝

1)Երևանի Կենտրոն Ռուսթավելի փողոց 17 հասցեում գտնվող դպրոցի շենքը՝ 3188.25 քառ. մետր ընդհանուր մակերեսով, օժանդակ շինությունը՝ 13.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 13.4 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 0.33164 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2015 թվականի մայիսի 19-ի թիվ 19052015-01-0080 վկայական), հետ վերցնել «Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը.

2) Երևան, Մյասնիկյան պողոտա թիվ 2 հասցեում գտնվող դպրոցի շենքը՝ 1521.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով, կաթսայատունը՝ 32.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 0.1772 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 2791286 վկայական), հետ վերցնել «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը.

3) Երևանի Կենտրոն Թափրովի փողոց 14 հասցեում գտնվող դպրոցի շենքը՝ 862.8 քառ. մետր ընդհանուր մակերեսով, կաթսայատուն՝ 48.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով, օժանդակ շինություն՝ 30 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 0.2582 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 07062013-01-0005 վկայական), հետ վերցնել «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մեկամսյա ժամկետում լուծել՝

1) Երևանի Կենտրոն Ռուսթավելի փողոց 17 հասցեում գտնվող անշարժ գույքի համար «Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 13.05.2013 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 73/0013 պայմանագիրը, սահմանելով որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

2) Երևան, Մյասնիկյան պողոտա թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի համար «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 21.07.2011 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 95/0011 պայմանագիրը, սահմանելով որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

3) Երևանի Կենտրոն Թափրովի փողոց 14 հասցեում գտնվող անշարժ գույքի համար «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ

01.06.2013 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 82/0013 պայմանագիրը, սահմանելով որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. «Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 286.210.04812) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 286.210.04813):

4. «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 273.210.03394) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 273.210.03396):

5. «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 290.210.02828) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 290.210.02827):

6. «Երևանի N99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 290.210.02809) վերանվանել «Երևանի N99 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ սահմանելով, որ նրա գործունեության՝

1) առարկան 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացումն է.

2) նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

7. Սահմանել, որ՝

1) «Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

3) «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

4) սույն որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են՝ համապատասխանաբար «Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց», «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց», «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

8. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված միացման արդյունքում ընդլայնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև հաստատել գույքի կազմը, արժեքը, միացման պայմանագրերը և փոխանցման ակտերը.

2) սույն որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված միացած պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարման պետական գրանցումը, սովորողների՝ ուսումնառության բնականոն գործընթացը.

3) «Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց», «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց», «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» «Երևանի N 99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը:

9. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյ ժամկետում, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 1-ին կետում նշված Երևանի Կենտրոն Ռուսթավելի փողոց 17, Երևան, Մյասնիկյան պողոտա թիվ 2, Երևանի Կենտրոն Թաիրովի փողոց 14 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հետագա օգատագործման վերաբերյալ:

10. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման հավելվածի «Ավագ և հիմնական դպրոցների» ցանկի Երևան բաժնի 93, 99-րդ և 105-րդ կետերը:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ N 99 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազման և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ, իսկ «Երևանի N 99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի N 99 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանել՝ «Ներքին Չարբախ» կոչվող թաղամասում գործող հիմնական դպրոցում սովորողների տեղաշարժի անհարմարության, ինչպես նաև առկա այլ սոցիալական դժվարությունների հետ կապված: Անհրաժեշտություն է առաջանում սովորողների կրթական կարիքները հոգալ իրենց բնակավայրում միջնակարգ դպրոց ստեղծելու միջոցով:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

«Երևանի Շ. Ռուսթավելու անվան N 23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնառում է 68 սովորող, սակայն դպրոցը նախատեսված է 365 սովորողի համար, «Երևանի Մ. Իշխանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 164 սովորող, նախատեսված է 600 սովորողի համար, «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 39 սովորող, նախատեսված է 300 սովորողի համար, «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 227 սովորող, նախատեսված է 400 սովորողի համար, «Երևանի N 81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 36 սովորող, նախատեսված է 120 սովորողի համար, «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 524 սովորող, նախատեսված է 700 սովորողի համար:

«Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով «Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, «Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N 41 հիմնական դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան N 10 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, «Երևանի N81 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Երևանի Վ. Վաղարշյանի անվան N80 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնասօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ /աշակերտների թվի փոփոխություն/:

Կրթական բարեփոխումների ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում ստեղծվել և այժմ գործում են թվով 4 ավագ դպրոցներ, որոնք միմյանցից գտնվում են 1-3 կմ հեռավորության վրա: Տվյալ ժամանակահատվածում Ներքին Չարբախում ավագ դպրոցի ստեղծումը նպատակահարմար չի եղել:

Թաղամասում այժմ գործում է թվով մեկ՝ Երևանի N 99 հիմնական դպրոցը, որտեղ առաջինից իններորդ դասարաններում սովորելուց հետո աշակերտներից շատերը Ներքին Չարբախում կրթական համապատասխան հաստատություն չլինելու պատճառով հաճախ զրկվում են ընդհանուր միջնակարգ կրթություն ստանալու սահմանադրական իրենց իրավունքից, քանի որ նրանք կրթությունը շարունակելու են իրենց բնակավայրից բավական հեռու գտնվող ավագ դպրոցներում, ուսումնարաններում և քոլեջներում: Սոցիալական խնդիրների պատճառով ծնողները երբեմն բավարարվում են երեխաների՝ հիմնական դպրոցի կրթությամբ:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով: Կապահովվի նշված թաղամասի երեխաների համար 12-ամյա կրթություն ստանալու հնարավորություն, իսկ ծնողները կազատվեն սոցիալական հոգսերից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Երևանի N 99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Երևանի N99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ N99 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N/ N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաՆը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացո ություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 2017-08-10 02/14/14203-17	<p>Առաջարկում է</p> <p>1. Նախագծի 4-րդ կետում և 7-րդ կետի 2-րդ ենթակետում դադարող պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել պետական գրանցում ստացած վերջին կանոնադրությանը:</p> <p>2. Նախագծի 8-րդ կետի 1-ին ենթակետում «միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերը փոխարինել «միացման արդյունքում ընդլայնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերով:</p> <p>3. Նախագծի 9-րդ կետում «տալ առաջարկություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն» բառերով:</p> <p>4. Նախագծի 10-րդ կետում անհրաժեշտ է ճիշտ նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի 4-րդ և 7-րդ կետի 2-րդ ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել փոփոխություն:</p> <p>2.Որոշման նախագծի 8-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> <p>3. Որոշման նախագծի 9-րդ կետում կատարվել է փոփոխություն:</p> <p>4.Որոշման նախագծի 10-րդ կետում կատարվել լրացում:</p>

		<p>հաստատելու մասին» N 575-Ն որոշման լրիվ անվանման տվյալների հաջորդականությունը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:</p>		
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 18.07.2017թ. N01/9-2/13018-17</p>	<p>Առաջարկում է</p> <p>1. Նախագիծ N1-ում ներկայացնել Երևանի Կենտրոն Ռուսթավելի փողոց 17, Երևանի Մյասնիկյան պողոտա N 2 և Երևանի Կենտրոն Թաիրովի փողոց 14 հասցեներում գտնվող անշարժ գույքի, օժանդակ շինության և կաթսայատան հաշվեկշռային արժեքները:</p> <p>2. Ճշգրտել Երևանի Կենտրոն Ռուսթավելի փողոց 17 հասցեում գտնվող Երևանի Շ.Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոցի, Երևանի Մյասնիկյան պողոտա N 2 հասցեում գտնվող Երևանի քաղաքապետարանի Ա.Ս.Գրիբոյեդովի անվան N41 հիմնական դպրոցի և Երևանի Կենտրոն Թաիրովի փողոց 14 հասցեում գտնվող Երևանի N81 միջնակարգ դպրոցի շենքերի մակերեսները, քանի որ Նախագիծ N1-ի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված է՝ համապատասխանաբար, 3215.15քմ, 1554.3քմ և 941.1քմ, իսկ Երևանի քաղաքապետարանի 27.02.2017թ. N01/9-2789 հ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ՊՈԱԿ-ների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ համապատասխանաբար, 3264.8 քմ, 1521.7 քմ և 911.1 քմ:</p> <p>3. Խմբագրել Նախագիծ N1-ի 7-րդ կետի 4-րդ ենթակետը՝ նկատի ունենալով, որ «Երևանի N99 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է հանդիսանում «Երևանի N99</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի 1-ին կետում լրացվել է շենք-շինությունների արժեքները:</p> <p>2. Որոշման նախագծում ճշտվել է վերակազմակերպվող կազմակերպություններին ամրացված շենքերի մակերեսները գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականների հետ:</p> <p>3.Որոշման նախագծի 7-րդ կետի 4-րդ ենթակետը խմբագրվել է</p>

		հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:		առաջարկին համապատասխան
3.	«Տարածքային կառավարման և զարգացման նախարար 10.07.2017թ. 01/15.1/4279-17	Առաջարկու է. 1.Որոշման Նախագծի հիմնավորման մեջ բացակայում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև այդ կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Այս առումով առաջարկվում է նաև վերանայել Նախագծի տեղեկանքի բովանդակությունը, կապված՝ կազմակերպությունների վերակազմակերպման արդյունքում հավանական կրճատվող հաստիքների պատճառով բյուջեում ծախսերի ավելացման կամ նվազման հարցը: 1.1 Որոշման Նախագծի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում ստանալ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը:	1.Ընդունվել է 1.1 Ընդունվել է	1.Նախագծի հիմնավորման մեջ լրացվել է կազմակերպությունների վերակազմավորման ժամանակ աշխատողների հետագա աշխատանքի տեղավորման հարցը: 1.1 Որոշման նախագիծը ներկայացվել է Երևանի քաղաքապետի քննարկմանը:
3.	«Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017թ.-07-14 N01/22.2/4523-17	Առաջարկում է. 1.1. 2-րդ կետի 1-ին ենթակետում ռացնել <13.05.2013 թվականին նքված անշարժ գույքի անհատույց գտագործման N 73/0013 կայմանագիրը>, 2-րդ ենթակետում՝ <21.07.2011 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց գտագործման N 95/0011 կայմանագիրը>, 3-րդ ենթակետում՝ <01.06.2013 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց գտագործման N 82/0013 կայմանագիրը> բառերը, 1.2. 7-րդ կետի 4-րդ ենթակետը արադրել հետևյալ բովանդակությամբ. <4) «Երևանի N99 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի N99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության	1. Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին,2-րդ և 3-րդ ենթակետերում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում: 2.Որոշման նախագծի 7-րդ կետի 4-րդ ենթակետը առաջարկին համապատասխան շարադրվել է նոր խմբագրությամբ:

		իրավահաջորդն է. >:		
4.	«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 11.07.2017թ. ՄՍ/4294-17	Առաջարկություններ և դիտողություններ չունի		
5.	Երևանի քաղաքապետարան 2017թ.-07-12 N 01/07-411066	<p>Առաջարկում է</p> <p>1. Որոշման նախագծի ա.7-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «4) «Երևանի N99 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի N99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է.»,</p> <p>բ. 8-րդ կետի 1-ին ենթակետը «գույքի հանձնման-ընդունման» և «գույքի կազմը» բառերից առաջ լրացնել «շարժական» բառով,</p> <p>գ. Վերախմբագրել 10-րդ կետը, հաշվի առնելով նախագծի 6-րդ կետի դրույթները: «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N575-Ն որոշման հավելվածի 93-րդ կետն ոչ թե պետք է ուժը կորցրած ճանաչվի, այլ շարադրվի հետևյալ խմբագրությամբ.«93. Երևանի N 99 միջնակարգ դպրոց»:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Երևանի N81 միջնակարգ դպրոցը ներառված չէ «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ, ուստի այս մասով ևս որոշման նախագիծը խմբագրման կարիք ունի:</p>	<p>ա. Ընդունվել է</p> <p>բ. Ընդունվել է</p> <p>գ. 2ի ընդունվում</p>	<p>ա. Որոշման նախագծի 7-րդ կետի 4-րդ ենթակետը առաջարկին համապատասխան շարադրվել է նոր խմբագրությամբ:</p> <p>բ. 8-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p> <p>գ. Նախագծով փոփոխություններ են կատարվել «Կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ, քանի որ դրանով հաստատված են ավագ և հիմնական դպրոցների ցանկերը, ուստի N81 միջնակարգ դպրոցը չի կարող ներառված լինել 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ: Միջնակարգ դպրոցները ընդգրկված են «Կառավարության 2002 թ մարտի 11-ի N 231 և 2002 թ հուլիսի 25-ի N 1392-Ն որոշումներով հաստատված հավելվածներում, և «Կառավարու-</p>

				թյան 2010 թ մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները /93-րդ կետի, N 81 միջնակարգ դպրոցը ներառելու վերաբերյալ./ անհիմն են:
--	--	--	--	---

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և «Երևանի N99 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

**ՀՀ կրթության և գիտության
նախարարության աշխատակազմի
իրավաբանական վարչության պետ՝**

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ